

Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանի

Ու ղ ե թ ձ ը

<<Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ>> լրագրողների համահայկական 6-րդ համաժողովի կապակցությամբ

/Մտեփանակերտ, 4 հոկտեմբերի 2012թ./

Համաժողովի հարգելի մասնակիցներ,

Ողջունում եմ <<Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ>> լրագրողների համահայկական 6-րդ համաժողովի բոլոր մասնակիցներին:

Լրագրողների համահայկական համաժողովները բարի ավանդույթ են դարձել մեր իրականության մեջ: Ուրախսալի է, որ նախորդ՝ 5-րդ համաժողովը, տեղի է ունեցել Արցախում:

Լրատվությունը հանդիսանում է ռազմավարական կարեւորություն ունեցող այն ասպարեզներից, որն առնչվում է պետության կենսագործունեության բոլոր ոլորտներին: Մեզ համար այն նաեւ աշխարհասփյուռ հայության միասնականության ամրապնդման, Հայաստան-Արցախ-Սփյուռք կապերի խորացման ու ընդլայնման, հայ ազգային ինքնության պահպանման առանցքային միջոցներից մեկն է, որի դերակատարությունը արդի համաշխարհայնացման պայմաններում դժվար է գերազնահատել:

Այս տեսանկյունից հատկապես կարեւոր է համայն հայության ջանքերի համախմբումը Մեծ եղեռնի միջազգային ճանաչման եւ դատապարտման գործում: Աշխատանքներն այս ուղղությամբ պահանջում են սերտ համագործակցություն Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի քաղաքական, լրատվական, գիտակրթական, վերլուծական եւ այլ շրջանակների միջեւ: Անհարժեշտ է նաեւ կայուն կապ հաստատել տարբեր պետությունների լրագրողների եւ ՋԼՄ-ների հետ:

Ակնհայտ է, որ ցեղասպանությունների կանխման համար անհրաժեշտ է ոչ միայն նման ոճիրների փաստի ճանաչումը, այլեւ ցեղասպանության քաղաքականության դատապարտումը եւ գործնական քայլերի մշակումը նրանց բացառման ուղղությամբ: Այս առումով անհրաժեշտ է նոր որակ հաղորդել Արցախյան հիմնախնդրի լուսաբանմանը եւ Ադրբեջանի կողմից շարունակվող հայաստյաց քաղաքականության դատապարտման գործընթացին:

Վստահ եմ, որ համաժողովը հաջողությամբ կիրականացնի իր առջեւ դրված խնդիրները եւ կնպաստի տեղեկատվական ոլորտում գործնական կապերի զարգացմանը:

Համաժողովին մաղթում եմ արդյունավետ աշխատանք, նրա մասնակիցներին՝ հաջողություններ եւ ամենայն բարիք:

Շնորհակալություն: